լի 75 կոպէկ, զորոյ զմիհատաքը բուբլին ըստ յորդորանաց իմոց նուիրեցին եղբարք Բուդաղեանք և բարեկամք նոցին եղբարք Ադամեանք, Մէլիքեանք եւայլն. զհինգ հարիւր բուբլին ըստ հրաւիրանաց իմոց նուիրեաց մեծապատիւ Կարապետ ազային Լալայեանց, իսկ մնացեալ 685 մանէթի 75 կոպէկ վանահայրն ծախեալ է յարդեանց վանիցն 304 մանէթի 12 կոպէկ. և 381 բուբլի 63 կոպէկ ստացեալ է փոխառութեամբ յայլոց յուսով յայսմ ամի ի բերոց այգւոյն վճարելոյ:

Չինութիւնն բազկանայ ի վեց սենեկաց ի վերայ տանեաց տնտեսատան վանից իբրեւ կրկնայարկ շինուած, որոյ որմունքըն են քար ու կրեայ, և տանիքն թիթեղապատ (ժեշտապատ) յատակն և առաստաղն տախտակամած, շինուածն է երկայնութեամբ 17 կանգուն (արշին) լայնութեամբ 15 և բարձրութեամբ 6, և ունի դրունս չինն և լուսամուտս 10ն և երկուս պատշգամբս (բալկօն) մին ընդ լայնութիւնն առաջի մեծ դրան և միւսն՝ որ հայի ընդ արեւելս ի վերայ աղբերն և պարտիզին՝ է փոքրագիւր 3 արշին լայն և 5 երկայն:

Հմ. 150

30 մայիսի 1889 ամի, ի Շամախի

Եւ այս յիշեալ յայտարարութեանս ի պատասխան Վեհափառ Կաթուղիկոսը Կոնդակաւ ի 26 յունիսի այս 1889 ամի, հմ. 268, յայտնելով իւր սրտի ուրախութիւնը Սաղիանի վանքին պայծառութեան համար, պատուիրէ վանահայր Ստեփաննոս քահանային ի տրիտուր աշխատութեանցն կոչել ի պատիւ կուսակրօն աբեղայութեան՝ տալով նմա զվեղար հովուական ի կատարումն միջնորդութեան իմոյ ի 25 նոյեմ. 1887 ամի հմ. 151, և ահա նոյն Կոնդակի պատճէնն: